թեան, հոգևոր ազդեցութեան, ազգի մտաւոր և բարոյական կեանքին զարկ և ուղղութիւն տալու ձգտման նախանձախնդիր նորա բանասէր զաւակունք չեն զլանալ իրանց ազգային պատմութեան, գրականութեան, եկեղեցական և բարոյական հմտութեանց լումայն Ս. Աթոռոյս բերան՝ Արարատի միջոցով ձգել Հայ ազգի ընդհանրութեան գանձարանը։ Խմբագրութիւնս միշտ լաւատես գոլով ազգիս բանասէրների վերաբերմամբ, յուսով կշարունակէ իւր գոյութիւնն և կյարատևի անշուշտ ի շնորհս բանասիրաց և յօգուտ հայ ազգի ընդհանրութեան, որ աւուր ջանք անելով ընդարձակելու իւր գործունէութեան շրջանը։

# ԿՐՕՆԱԿԱՆ

## ԷՋՄԻԱԾԻՆ.

### Ա.

Արտաքին և նիւթական առարկաներ չեն մեր բանական կարողութեանց նպատակը, այլ ներքին և հոգեկան առարկաներն են մեր պահանջածները. և երբ բնազանցական և բարոյական և կրօնական սկզբունքներ կորոնեմք, կըպարտաւորուիմք կարծես բանական թափանցիկութիւն մը ենթադրել ամեն առարկայի վրայ, և երևցածէն անդին եղածը տեսնել, և արտաքին և նիւթական իրերուն՝ ներքին և հոգեկան իմաստն ու նպատակը իմանալ։ Այդ մեծ ճարտարութեան շնորհիւ մեք կիջնեմք մեր հոգեկան բարձրութենէն մինչև նիւթական առարկաները, և կըբարձրանամք մեր նիւթական ստորնութենէն մինչև հոգեկան առարկաները. և այդ իմացական ելև էջին մէջ կըպահեմք մեր հաստատուն ուղղութիւնը, և կըգտնեմք մեր մտաւոր դադարման ծանրակէտը։

Բնազանցական և բարոյական և կրօնական, և թէ կամենամք, ուսումնական և ազգայնական և եկեղեցական ծանր գաղափարներ կըգրաւեն ամեն Հայուն մտադրութիւնը։ Ոչ բարձրաստիճան եկեղեցական, ոչ բարձրապաշտօն աշխարհական, բարձրահմուտ ուսումնական լինել պէտք է՝ ազգին 2
ու գործոյն զբաղելու համար։ Ով որ մարմնոյ մը անգ

նոյն մարմնոյն կենսական և ընդհանրական հոգերը կը քաշէ, բովանդակ մարմինն է որ մի անդամը կպահէ, մարմնոյն ծառայողը մի անդամին ալ ծառայած է։ Այդ է բուն պատճառը, որ բարձրաստիճան եկեղեցականին մօտ նորահաս դպիրը, բարձրապաշտօն աշխարհականին մօտ սոսկական մշակը, բարձրահմուտ ուսումնականին մօտ անուս դռեհիկը, հաւասար ջանիւ փոյթ ունին ազգին և եկեղեցւոյն վրայ խորհելու, հաւասար եռանդ ունին օգուտներ պատրաստելու, և հաւասար գրգիռ ունին բան մը ըրած լինելու։ Ընդհանուր բարւոյն աշխատելուն մէջ կան յիրաւի իւրաքանչիւր անհատի կարողութեան և արդիւնաւորութեան տարբերութիւններ· կան և կամեցողութեան և յօժարամտութեան զանազանութիւններ· և այդ պայմաններուն իրարու հետ համեմատութեան դժուարին հանգոյցներ և անլոյծ երևոյթներ ալ կան, սակայն ամենուն վրայ հովանի այդ ճշմարտութիւնն է թէ՝ կապակցեալ և միացեալ աշխատութենէն զատ՝ նպատակին հասնող և ամբողջական գործը պաշտպանող բան մը ոչ կայ, և ոչ ալ լինել կարող է։ Յայտնի ճշմարտութիւնք բացատրութեան և ապացուցութեան չեն կարօտիր։ Ուրեմն վերացեալ ճշմարտութեանց վրայ այդ չափն ալ շատ է, մենք մեզի դառնանք և մեր խօսից բուն նպատակին մօտենանք։

Հայութիւնն մարմին մի է· իւր ամեն ձախորդութիւններով և փորձանքներով մէկտեղ՝ մարմին մը լինելէ չէ դադարած։ Շատ մասեր վրայ տուեր է, փոքրկացեր ալ է, կորուստներ ալ ունեցեր է, այլ չէ ոչնչացեր։ Գիտուններ անուն մը աշխարհագրական կըսեն, անուն մը պատմական կըսեպեն, անուն մը կրօնական կըկոչեն, և անուններու նշանակութեան վրայ կը վիճեն։ Թող վիճեն որչափ որ ուզեն և վճռեն որպէս որ ուզեն, միայն թէ իրական լինելը չուրանան· չուրացուիր այն՝ որ զգայութեանց առարկայ է։ Հայութեան մարմինը ըստ որում իրական, բնական օրինաց զօրութեամբ իւր իրական կեանքը պիտի ցուցնէ իւր գործերով, զի թէ դադարի գործելէ՝ պիտի դադարի և ապրելէ։ Իսկ իւր գործերը չեն կարող անցնել այն սահմաններէն անդին՝ զորս ընկերական, քաղաքական, պետական և կրօնական բարոյականութիւններն համահաւասար կերպով նշանակած են, և որք ի մի գումարեալ կը-

կազմէն, ինչ որ մենք օրինական գործունէութիւն կը կոչեմք։

Հայուն գործունէութիւնն ալ, փառք Աստուծոյ, արևու լուսով և աշխարհի տեսով կատարուած գործունէութիւն է. կայսերական մեծազօր հրովարտակներու հովանեաւ պաշտպանուած է զանազան տիրող պետութեանց համակրանօք ամրացած է։ Հայ մարմնոյն իրականութեան հիմը կազմող գործունէութիւնն ոչինչ չունի՝ որով մէկու մը կասկածաւոր կերպարանք կարողանայ ցուցնել։

Այդ գործունէութիւնն հնար չէ որ արդիւնաւոր լինի մի միայն հոգւոյ ըմբռնմանց, մտքի դիտմանց և սրտի զգացմանց զօրութեամբ, եթէ չունենամք նաև արտաքին կերպեր գործը յաջողցնելու, նիւթական կապեր զօրութիւնները միաւորելու, զգալի միջոցներ գործերը բարդելու։ Ո՞վ կուրանայ թէ հոգի եմք, սակայն ո՞վ ալ կարող է ուրանալ թէ մարմին ալ եմք։ և մարմնաւոր կերպեր, կապեր և միջոցներ շատ աւելի ազդեցիկ են մեր վրայ, մանաւանդ թէ առանց անոնց մեք ապրիլ և գործել ալ կարող չեմք։

Եթէ ազգային մարմնոց կազմութեան և նորա մասանց փոփոխ և սերտ կապակցութեան օրինակ մը փնտռեմք, կը գտնեմք զայն բրգաձև մարմիններու վրայ։ Բրգաձևը կաւարտի ի մի միայն կէտ, որ գերագոյնն է և լրումն բովանդակ մարմնոյն և այն մի կէտն այնպէս հանգչած է ստորադաս բոլոր մասերուն վրայ, որ անոնցմէ որն և խախտի գագաթնակէտին հաստատութեան կը դպչի. և փոխադարձաբար ամեն մի ստորադաս կէտը կամ մասը այնպէս յարմարած է գագաթնակէտին հետ, որ եթէ անոր ուղղութենէն դուրս լինի մարմինէն ալ դուրս կը սեպուի,

Մեր Հայութեան մարմինն ալ չէ կարող այդ նմանութեան խստութենէնն շեղիլ, և որք Հայութեան մէջ են կամ լինիլ կը կարծեն, անհնար է որ գագաթնակէտին յարաբերութենէն և ուղղութենէն շեղին, և տակաւին մարմնոյն ամբողջութեան մէջ մնալ կարողանան։

Ազգային մարմնոյն և ազգայնութեան կապին վրայ՝ այնչափ և անչափ գաղափարներ ունեցողներուն մէջ ալ կարող եմք տարբերութիւններ գտնել՝ գագաթնակէտը ինչ լինելը որոշելու առթին. այլ կարծեմ թէ չեմք կարող տարբերութիւն գըտ-

նել գագաթնակէտին ազդեցութիւնը ճանչնալու առթին։ Եթէ և բնաւ արտաքին կապ մը չլինէր, ազգն ալ զգալի ինչ մը չէր լինէր, և ինչ որ զգալի չէ, մարդկային կեանքին և աշխարհի դրութենէն օտար բան մը կըլլինէր ի հարկէ։

Ահաւասիկ խօսքերնուս նպատակին հասած եմք, և պէտք է ըսեմք թէ ի՞նչ է Հայութեան բրգաձևին հաստատութեան և լրման գագաթնակէտը, որոյ ուղղութիւնը պիտի գծէ Հայութեան պարունակութիւնը, և որոյ ազդեցութիւնը պիտի կազմէ հայութեան մասերը։

Գագաթնակէտը Ս. Էջմիածինն է։

Եւ զայդ կարտասանեմք առանց բացառութեան և առանց զարտուղղութեան։ Արդեօք Ս. Էջմիածնէն զատ ուրիշ մը կարող եղե՞ր է, կամ կարող է՞, կամ կարող պիտի լինի՞ այդ դերը ստանձնել. այդ խնդիրներն մեզի համար աւելորդ խնդիրներ կըսեպուին. քանի որ իրական գործերու լուծումը փորձառական մեկնութեամբ կը դրուի, և ոչ հնաւորութեանց բացատրութեամբ։

Մեր գոյութեան խորհուրդը կրօնքն է, և գաղտնիքը եկեղեցին է. Հայը հայ է ղի հայադաւան է, առանց այնր հայը հայութիւնը թողեր է և հայութեան համար կորեր է. թող խօսին կրօնափոփոխութեամբ ազգափոխ եղածներու տեղերը ու թիւերը։ Իսկ Հայուն կրօնքին և եկեղեցւոյն լրումը՝ անհակառակ Էջմիածինն է,

Մեր գոյութեան նշանը գործողութիւնն է, և կեանք գործունէութիւնն է։ Հայը հայ է ղի հայաբար կը գործէ. առանց այս պայմանի գործունէութիւնն նպատակէն դուրս է և վնասակար է։ Թող խօսին օտարասիրութեամբ տարուդէպ նպատակներու ծառայողներուն յիշատակները։ Իսկ Հայուն նպատակին ուղղութիւնը բովանդակողը՝ անհակառակ Էջմիածինն է։

Մեր գոյութեան միջոցը տկար զօրութեանց միաւորութեան հարկաւորութիւնն է։ Հայը հայ է՝ երբ հայ ընկերաց միութեան մէջ է. արտաքոյ այդ միութեան աշխատանքը ի զուր չարչարանք է, առանց օգնութեան մնալը անտարակոյս վտանգ է։ Իսկ հայուն սեպհական զգացմանց միակ կեդրոնը՝ անհակառակ Էջմիածինն է։

Մեր գոյութեան արդիւնքը մեր քրտանց բեղմնաւորութիւնն

է, մեր պարտէզին պաղաբերութեան աճումն է։ Հայը հայ է, երբ հայ պարտէզին մշակն է և երբ իւր հաստատած պտուղը օտար թոյնով խանգարուած չէ։ Թող խօսին հայութեան անուամբ գործուած շատ մը բաներու պատճառած անզգալի վնասները։ Իսկ հայուն անխառն քաղցրութիւն պատրաստողը անհակառակ Էջմիածինն է։

«Ոսկի խարիսխն՝ վէմն հաստատութեան անշարժութեան է, և սիւնն հրեղէն՝ կաթուղիկէ եկեղեցի է. «Այդպէս կըբացատրէր մեր Երանեալ Լուսաւորիչն՝ Միածնի Իջման տեղւոյն գերբահրաշ խորհուրդը։ Եւ ինչ որ երկինք ցուցուցին կանխագուշակ ազդմամբ, երկիր հաստատեց յայտնի գործողութեամբ։ Եւ ինչպէս այն ժամանակ արտաքին նշաններով կը ցուցուէր ապագայն, նոյնպէս և այժմ արտաքին նշաններով կըհաստատուի ներկայն, այնպէս որ եթէ վերցնեմք ամեն արտաքին նըշան, չեմք գտներ այլ և և ոչ զիրար ճանչնալու անհրաժեշտ միջոցը։

Իսկ նոքա՝ որք Լուսաւորչայ լոյս կրօնքէն շեղեցան, օտար դաւանութեանց աշակերտեցան, կրօնից ազդեցութիւնը մոռանալ ձեւացան, չգործեցին արդեօք և ոչ մի օգուտ հայ սերընդին համար, չունի՞ն արդեօք և ոչ մի նշանակութիւն հայութեան համար։ Եւ ինչու չէ՞։ Միթէ և երախտաւոր օտարազգիներ ալ չունիմք, որ մեր ազգին համար թանկագին ծառայութիւններ են կատարած։ Ամեն ճիւղի, և մանաւանդ ուսումնական ճիւղի մէջ, լեզուաբանութեան և դպրութեան, աշխարհագրութեան և պատմութեան ուսմանց մէջ գնահատելի ծառայութիւններ մատուցին մեզ հետազնին և բանիբուն օտարազգիք, երբեմն մանակի և երբեմն ամբողջակի նոցա երկերէն և արդիւնքներէն օգտուեցանք, մինչև իսկ նոցա համակրանքն ալ գնահատեցինք և հայօգուտ և հայասէր կոչեցինք այնպիսիները. այլ միթէ հայազգի ալ կոչեցի՞նք արդեօք։

Ցաբբեր է բոլորովին ճշմարիտ հայազգւոյն հոգին, միտքն ու սիրտը, մտածմունքն ու գործը։ Դրական կերպով օգուտ մը արտադրած ատեն, բացասական կերպով վնաս մը գործելէ կըխիթայ. պատմութիւն քրքրած ատեն՝ ազգային սրտից թելերը թրթռացնող քաղցր յիշատակներուն երկիւղածութեամբ կըհպի. լեզուն ծաղկեցուցած ատեն՝ սիրտը խամրացնելէ կը

վախնայ. ուսման լոյսը ծառայել կարծած ատեն՝ կրօնից լոյսը աղօտացնել կըխղճէ. ազգութեան յիշատակները ճանչցուցած ատեն՝ ազգութեան կապերը թուլցնել չմտաբերեր. գիտութեանց մէջ խորամուխ եղած ատեն՝ գժտութեանց փոսեր բանալու չը յանդգնիր. միով բանիւ սիրտը չըվաճառեր որ միտքը գնէ։

Ո՛հ, եթէ ներեալ լինէր, ազգային եկեղեցւոյ ծոցէն հեռացելոց գործած օգուտները և պատճառած վնասները ի կշիռ դնել և անաչառ դատաստան հատանել, առանց անձնական խնդիրներու լարծուն գեսինը կոխելու, որչափ դիւրաւ կարող պիտի լինէինք իրական գաղափար մը կազմել զանազան խնդիրներու վրայ, որք սաստիկ ջերմութեամբ կը յուզուին ազգայնոց մէջ։ Այլ այդ չէ մեր նպատակը. մեզ բաւական է, նաև մեր օրերուն մէջ գործով և փորձով հաստատուած տեսնել. թէ Հայուն համար շահերուն շահի և նպատակներուն նըպատակը իւր կրօնքին և կրօնական կեդրոնին հաւատարիմ մնալն է։ Սպառնալից արհաւրաց մէջ միակ ելքի միջոցը, դժուարին խնդրոց մէջ միակ լուծման փաստը, բազմակողմանի պարագայից մէջ միակ ապահով եղանակը։ Եկեղեցւոյն և Մայր Աթոռոյն անվթարութեան բարձր սկզբունքն է։

«Լոյսն հոսեալ ի վերուստ ի վայր մինչև յերկիր հասանէր», և երկիրն բարեբաղդ՝ որ Միածնի իջմամբ լոյսոյն օթևան կըլլինէր, նոյն է որ ծանրածանը փորձանաց ներքև Հայ եկեղեցւոյն միակ փրկարար հանդիսացաւ և կըհանդիսանայ որպէս փոթորկալից ամպրոպաց ժամանակ նաւամատոյցներու բազմայոյս լապտերը։

Աւա՜ղ, որ դժպհի փորձառութիւններն ալ մեծ դեր ունեցան մեզ ամենեցուն այդ ճշմարտութիւնները ուսուցանելու։ Եւ որչափ երբեմն թեթևակի խաբկանաք կրօնական հովանիէն դուրս ապահով վայրեր որոնեցինք, նոյնչափ և առաւել հաստատուն համոզմամբ կը դառնամք այժմ առ միակ ապաւէնն. և այլ ևս չեմք խղճեր մեր անձնախաբութեան պաշտած մանր կուռքերը ջարդել, և լուսաւորչի տեսած հրեղէն սեան գագաթը փայլող լուսաւոր նշանը պաշտել. «Եւ խաչն լուսոյ ի վերայ նորա»։

Այդ սկզբունքն է, այդ մեր ներքին համոզման ընդունած

ճշմարտութիւնն է. այլ կըսէի և կըսեմ, եթէ արտաքինն ալ չըկցինք այդ ներքին համոզման, տակաւին տկար կըմնայ մեր աշխատանքը, և նուաղ օգտակար մեր ջանքը։ Ամենքնուս սիրտը շարժելու, ամենքնուս քրտինքը միացնելու, ամենքնուս գործը իրարու հետ կապելու, մի ընդհանուր կեդրոն պէտք է, և այդ կեդրոնին ընդհանրական գլուխ անհրաժեշտ է։

Որչափ արևը ժուռ կուգայ աշխարհիս վրայ, և մի կողմը խաւարցնելով միւս կողմը կըլուսաւորէ, կարծեմ թէ երբէք Հայ զաւակները իւր ճառագայթներէն չըզրկէր, այնչափ ցրուած են հողագնտին երեսը։ Իբր թէ երեք մեծ կայսրութեանց ընդարձակատարր գաւառները բաւական չլինէին, գրեթէ ամեն պետութեանց մի կողմը Հայութեան մի նշխար կըգտնուի մնացած։ Ամեն լեզու խօսող հայեր ունինք, մինչև իսկ իրենցը չխօսողներ. լեզուն մոռացեր, պատմութիւնը մոռացեր, հայրենիքը մոռացեր, այլ կրօնն են պահպաներ, և Իջման Տեղւոյն հաւատքովը կատարեալ Հայ են։ Ուրիշ ի՞նչ կարող եմք գտնել՝ նոցա սրտին դրաւիչ, նոցա գոյութեանը ապահովիչ, նոցա միաւորութեանը գործիչ։

Պիտի լռէինք կամակա՛ր, մեր միակ գագաթնակէտի միացման սկզբունքը կրկնելէն, եթէ երբէք լաւագոյն և արդիւնաւորագոյն միջոց մը ուրիշէն առաջարկուած տեսնէինք։

Իսկ այդ սկզբունքը իրագործելու միակ եղանակ կգըտնեմք մեք, գլխոյն և անդամոց յարաբերութիւնները ամրապնդել, արտաքին նշանները բազմացնել, փոփոխակի առընչութեանց առիթները պահպանել և վերջապէս զգալի ընել այն միաւորութիւնը որ զմեզ կըկապէ, և ի սէր միաւորութեան չխղճել և չկասիլ ինչ ինչ զոհաբերութեանց առջև ալ։ Առաջին ազատուելիքը կեանքն է, և կեանքը գոյութիւն է. գոյութեան ձևերը կենաց զարդերն են միայն։

Այլ թէ ինչպէ՞ս։

Ահա նոր և ընդարձակ ասպարէզ որոյ սահմանէն ներս մըտնելու կըխիթամ արդարև. Կըխիթամ ոչ զի համարձակ խօսելէն կըխուսափիմ, այլ զի մասնաւոր խնդիրներու վրայ խօսելու և մանր պարագաներու վրայ երկարելու պիտի ըստիպուիմ, և այս անգամ միայն ընդհանուր տեսակէտով խօսելու նպատակ էի հաստատած. ուստի յարգեմ որոշումս։

Բայց ոչ առանց յիշատակելու թէ յարաբերութեանց մը-
շակուելուն և միաւորութեան զգալի կերպերով ամրապընդ-
ուելուն մէջ, մենք լոկ վարէն վեր չեմք խօսեր. իբր թէ
Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակներ, ուր ուրեք որ լինին,
պարտաւորութիւն զգան առ Մայր Աթոռն խանդակաթ ցոյցեր
ընելու. այլ և վերէն վար, այսինքն է որ Մայր Աթոռը պէտք
չէ մոռանայ իւր զաւակները, եթէ և սակաւ տասնեակներ-
ով տեղ մը խմբուած գտնուին։ Բաւական չէ Ռուսական
գաւառաց վրայ անմիջական հսկողութեամբը՝ և Օսմանեան
գաւառաց վրայ Կոստանդնուպոլսոյ Աթոռոյն միջնորդու-
թեամբը շատանալ, զի և Պարսկաստան և Հնդկաստան, Ռու-
մանիա և Բուլղարիա, Տրանսիլվանիա և Հելլադա, Անգղիա
և Գաղղիա, Բատաւիա և Սինգապուր, Յիշեմ և Ամերիկան
և Սիբերիան, պէտք չէ վրիպին Մայր Աթոռոյ հսկողութե-
նէն. զի եթէ այն տեղեր այժմէն օրինաւոր հսկողութիւն լի-
նի, յետոյ բազմաթիւ կորուստներ ողբալու տխուր հարկին
ներքև չեմք գտնուիր։ Բայց այդ կէտին վրայ գուցէ վերա-
դառնամք խօսիլ։

Միւս այլ կէտ ոչ նուազ նկատողութեան արժանի Մայր
Տաճարին և Մայր Հայրապետանոցին դիրքն է։ Ամեն անձի
համար նստած տեղը նկատողութեան արժանի է. և մանա-
ւանդ թէ անձն ու տեղը, բնակիչն ու բնակութիւնը սերտ
յարաբերութիւն ունին։ Մայր Տաճարին կամարները անապա-
հով վիճակի մէջ են, պատերը ճարդ ու նկար կորնցուցած,
խոնաւութիւնն յատակին տիրապետած, Վեհարանի սրահները
անձուկ, կերպարանքը յոյժ համեստ, զարդարանքն պարզա-
պէս նախնական. իսկ միաբանից բնակութիւնք նախնի միան-
ձանց սովորութեանց յոյժ համեմատ, թէպէտ այլ և ժողո-
վուրդը ճգնաղգեաց կրօնաւորները չըպահանջեր, այլ իմաստու-
զգեաց հովիւներ։

Ով որ ղինքն Հայ կղզայ, թէպէտ և երբէք Էջմիածնայ սեմը
տեսած չլինի, տակաւին կըհասկանայ թէ անշուք չկրնար լի-
նիլ Առաքելական Աթոռոյ Մայր Տաճարը, հասարակ չկրնար լի-
նիլ Լուսաւորչեան Գահակալին հայագումար օթարանը։ Ահա-
ւասիկ գեղեցիկ առիթ Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակաց
իրենց ջերմ զգացմանց վկայութեան հաւաստի նշաններ ըն-

ծախելու։ Միթէ՞ չեմք գիտեր որ լումաններու հաւաքմամբ ոսկիներու բիւրեր կազմող հասարակութիւններ ալ կան։

Այլ Մայր Տաճարի ներկայն և անհրաժեշտ նորոգութիւնն ալ այնպիսի կէտ մի է, որ կարժէ վրան յատկապէս խօսիլ։

ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ.

## ԿՐՕՆ

Աստուած իրան յայտնում է մարդոց նորա համար միայն, որ նորանց սովրեցնէ՝ թէ ինչ է Ինքն ու թէ մարդիկ ինչ են պարտաւոր անելու․ ուրեմն Կրօնն իսկապէս ուրիշ բան չէ, եթէ ոչ Աստուածային մի լոյս, որ Աստծուն յայտնում է մարդոց, ու կարգի դնում, կանոնաւորում նորանց պարտականութիւնները դէպի Աստուած։ Ամենաբարձրեալը՝ թէ յայտնուելովն աշխարհիս վերայ, և թէ իւր հոգով լցնելովը կարգից դուրս մարդոց, իւր բռնած ճանապարհների մէջ մի նպատակ միայն ունի, կամ կարող է ունենալ, այն է՝ ճանաչեցնել ու սուրբ անել տալ Իւր անունը տիեզերքի մէջ, և հաստատել մի սուրբ, մի երկրպագելու պաշտօն, որ պիտի մատուցանեն միայն Իրան, մի պաշտօն, որ միայն Իրան է վայել և պատշաճ։

Կրօնի նիւթի մէջ՝ հնութիւնը նորա այնպիսի մի դրօշմն ու առանձնայատկութիւնն է, որ մարդուս բանականութիւնը միշտ մեծապէս յարգում է․ ու կարելի է ասել թէ՝ մի հաւատ, մի Աստուծոյ պաշտօն՝ որ առաջին մարդոց կրօնումն է սրբագործուած ու հին ժամանակների մարդոց մաքուր ու պարզ հոգւովը․ շատ հնուց կազմած մի հաստատ համոզմունք է, որ վկայում է նորա իսկութեանը։ Կրօնի ճշմարիտ լինելը նորա համար չէ, որ սուտութիւնը շատ անգամ չփառաւորուի իսկութեան կերպարանքով և ճշմարտութեան իբր նոյնպիսի տիտղոսներով․ կամ թէ ցոյց տալու համար, որ մարդոց մէջ չկան հին մոլորութիւններ ու սխալմունքներ, որ կարծես վէճի մէջ են մտնում ճշմարտութեան հետ իրանց շատ հին ծագումն ունենալու մասին․ բայց ով որ ուզում է նորա պատմութիւնը հետազօտել, դժուար չէ գնալ, հասնել մինչև նոցա սկիզբն առնելու